ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ՝ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԻ ՕՐ»-Ի ԱՌԻԹՈՎ

ՈՒՂԵՐՁ ՀՌՈՄԻ ՊԱՊԻՆ

Ձերդ Սրբություն,

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, նրա բազմադարյան կենտրոն Սուրբ Էջմիածնից հղում եմ Ձերդ Սրբության իմ հարգալից սիրո ողջույնը և բարձր գնահատանքը Ձեր աստվածահաճո նախաձեռնության համար, մեծ աղոթող և սիրո առաքյալ Սուրբ Ասիացու ծննդավայրում կազմակերպելու քրիստոնեական Եկեղեցիների համատեղ աղոթք՝ վասն խաղաղության մեր օրերի փոթորկված երկրագնդի:

Իրոք այս տագնապալի ժամանակներին մեր հոգևորականներիս ամենասեպուհ պարտականությունն է աղոթել ու գործել ի խնդիր աշխարհի մեծ ու փոքր ազգությունների խաղաղ գոյակցության:

Ես հույժ ողջունելի եմ գտնում նաև ատոմական փորձարկումների դադարեցման և ընդհանուր վինաթափման առաջարկությունները բազմաթիվ պետական պատասխանատու ղեկավարների, որոնք հանդես են գալիս իրենց հեղինակավոր խոսքով, որոնց շարքին առաջին գծի վրա է գտնվում մեր երկրի, Սովետական Միության կառավարությունը:

Ես քաջ գիտակցում եմ անշուշտ, որ բացի խաղաղության հրամայակա-

նից մեր օրերի մարդկության առաջ դրված կան նաև այլ կենսական հարցեր, որոնք սպասում են իրենց լուծման, ինչպես գաղափարախոսական և ընկերային հակամարտությունները, ազգամիջյան սուր թշնամանքներ, ցեղային խտրականության վատառողջ շարժումներ, մարդու իրավունքների հետ կապված հարցեր, որոնք սակայն կարող են լուծվել առտիճանաբար միջազգային ճիգերով, միմիայն խաղաղ ճանապարհներով, միայն պետությանց խաղաղ գործակցության պայմաններում:

Ես համոզված եմ, որ բոլոր դեպքերում արդարությունը հետապնդում միայն խաղաղությամբ կարելի կլինի իրականացնել: Ամեն տեսակ վերքեր կարելի պիտի լինի բուժել խաղաղ հոգու բալասանով: Ամեն տեսակ հարցեր արդարությամբ լուծելու հիմնական կենքը՝ դա խաղաղության կենքն է:

Ավելի քան երբեք այժմեական է Հակոբոս առաքյալի խոսքը՝

«Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբոս առաքյալ Գ 18):

Մաղթում եմ, որ բոլորիս աղոթքները միատեղ ուղղվ բարձրանան դեպի կատարները երկնքի, մեր երկնավոր մարդասեր Հորից հայցելու՝ «զերկնիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Իմ սույն ուղերձը Ձերդ Սրբության բերում է իմ կողմից լիապորված գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոլատյանը, որ Ասիայի արարողությանց ընթացքում կներկայացնի Հայ Առաքելական Եկեղեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ի Սուրբ Էջմիածին:

Եղբայրական սիրո ողջագուրումով ի Քրիստոս՝

Տեր և Փրկիչ մեր՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 հոկտեմբեր 1986 թ.